Երկու խոսք

Հայագիտական հետազոտությունների սույն ժողովածուն ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի Հնագիտության և ազգագրության ինստիտուտի մասնաճյուղը հանդիսացող Շիրակի հայագիտական հետազոտությունների նորաստեղծ կենտրոնի գիտական աշխատությունների անդրանիկ եռատոն է: Նրանում գերազանցապես ամփոփված են կենտրոնի մեկամյա գործունեության արդյունքները: Դրանք հայագիտության բնագավառում Շիրակի մարզում ներկայումս տարվող ուսումնասիրությունները ներկայացնող գիտական հոդվածներ են, նաև հրապարակումներ և եզրակացություններ:

Ուսումնասիրվող խնդիրների խորությամբ, առաջադրված հարցադրումների ընդգրկումով ու մեկնաբանություններով այս հրատարակումները նաև հայտնում են մարզում հայագիտական արդի հետազոտությունների հիմնական ուղղությունները (հնագիտություն և պատմություն, լեզու և բանահյուսություն, ազգագրություն և էթնոտցիոլոգիայի ու էթնոհոգեբանության խնդիրներ) և նրանց հետագա ծավալման հեռանկարները:

Ժողովածուում ենագիտական, մարդաբանական, լեզվաբանական, պատմագիտական և այլ նյութերի համադիր տպագրությունը արդյունք է նորաստեղծ կենտրոնում տարվող գիտական աշխատանքների փաստական վիճակի: Հետագայում ուսումնասիրությունների տրության ընդարձակմանն ու խորացմանը համընթաց, նաև կենտրոնի զորացմամբ՝ անշուշտ հնարավորություն կունենանք թիմային պրակտիկ հատկացնելու ստանձին բնագավառներում տարվող ուսումնասիրությունների հրապարակման համար:

Ժողովածուն հրատարակվում է ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի գիտաշխատողների նվիրատվություններով, մասամբ նաև՝ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչության հովանավորությամբ:

Խմբագիր